

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուի հայագիտական գրականության համալրման

I. Ներածություն

Հայաստանի ազգային գրադարանը (ՀԱԳ) լինելով հայագիտական գրականության խոշորագույն պահոցը աշխարհում, իր հավաքածուներում է պահում հայագիտական բնույթի գրավոր հուշարձաններ, փաստաթղթերի պարտադիր օրինակներ, փորձաքննությամբ արժևորված փաստաթղթեր: ՀԱԳ-ը ունի հայ հնատիպ (1512-1800թթ.), և վաղ շրջանի տպագիր գրքի (1801-1850թթ., 1851-1900թթ., 1901-1920թթ.) ամենահարուստ հավաքածուն:

Գրադարանի հիմնական գործառնություններից է այդ հավաքածուների պահպանությունը, համալրումը, մատենագիտական մշակումը՝ հանրության տարբեր շերտերին և հետազոտողներին գիտամշակութային այդ արժեքները հասանելի դարձնելու նպատակով:

Հայագիտական գրականությամբ ՀԱԳ-ի հավաքածուների համալրման հայեցակարգի անհրաժեշտությունը բխում է այն հանգամանքից, որ սկսած 1990 թվականներից դարակազմիկ աշխարհաքաղաքական ու սոցիալ-տնտեսական փոփոխություններ են տեղի ունեցել տարածաշրջանում: Հայագիտական գրականության համալրման հայեցակարգի համար հիմք են հանդիսանում ՀՀ կառավարության «Հայագիտության զարգացման 2012-2015թթ. գործունեության հայեցակարգի դրույթները», ՀՀ օրենքը «Փաստաթղթերի (վավերագրերի) պարտադիր օրինակի մասին», ՀՀ կառավարության կողմից ընդունված «Փաստաթղթերն արժևորելու, ազգային գրադարանային հավաքածուի կազմում ընդգրկելու» կարգը:

Հայագիտական գրականության համալրումը հայագիտությունը հայության ազգային, պետական և մշակութային անվտանգության գործոն դարձնելու. հայ ազգային, քաղաքական, մշակութային նկարագրի ու դրսևորումների հանրահռչակման և ճանաչելիության ապահովման բաղկացուցիչներից է, հայրենասիրական դաստիարակության, երիտասարդ սերնդի, Հայրենիքի սահմանների և երկրի ներքին քաղաքական կայունության պահպանության, ազգային ինքնագիտակցության խորացման, ազգային ինքնագնահատականի բարձրացման գրավականներից մեկն է:

Հայագիտությունը գիտությունների համակարգ է, որն ուսումնասիրում է հայոց լեզուն և գրականությունը, պատմությունը, հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթը և ներառում է հայ լեզվաբանությունը (հայոց լեզուն իր բոլոր դրսևորումներով՝ գրաբար, միջին հայերեն,

արդի գրական հայերենն իր երկու ճյուղերով ու համակարգերով՝ արևելահայերեն ու արևմտահայերեն, խոսքի մշակույթ, բարբառագիտություն և այլն), հայ գրականագիտությունն իր բոլոր դրսևորումներով ու զարգացման շրջափուլերով (հայոց հին և միջնադարյան, նոր ու նորագույն, սփյուռքահայ և օտարագիր, ժողովրդական բանահյուսություն, գրական-քննադատական մտքի պատմություն և այլն), հայ պատմագիտությունն իր օժանդակ գիտություններով (հնագիտություն, ազգագրություն, աղբյուրագիտություն, պատմագրություն, մատենագրություն և մատենագիտություն, վիմագրագիտություն, վավերագիտություն ու դրամագիտություն, Հայաստանի պատմական աշխարհագրություն, պատմական ժողովրդագրություն, մարդաբանություն և այլն), պատմական բժշկագիտությունը, հայ իրավագիտությունը, հայ հասարակական-քաղաքական և տնտեսագիտական մտքի պատմությունը, հայ իմաստասիրությունն ու արվեստագիտությունը:

Հայագիտության կարևոր բնագավառներից են սփյուռքագիտությունը, հարևան ժողովուրդների հետ հայերի պատմամշակութային հարաբերությունների ուսումնասիրությունը:

Հետևաբար, Հայաստանի ազգային գրադարանի (ՀԱԳ) հավաքածուն հայագիտական ուղղվածության նյութերով համալրելիս հարկավոր է ուշադրություն դարձնել հենց վերը թվարկված թեմատիկ ուղղություններին:

Համալրման հայեցակարգը նպատակ ունի

- ստեղծել պայմաններ լավագույնս բավարարելու ընթերցողական պահանջները.
- տրամադրել ուղենիշներ հայագիտական ուղղվածության հավաքածուների շարունակական համալրման և երկարաժամկետ պահպանության համար.
- ծառայել ուղեցույց Հայաստանում և նրա սահմաններից դուրս հայագիտական բնույթի գրականության տեսականու և անհրաժեշտ օրինակների ընտրության հարցում
- ստեղծել աշխարհի առաջնակարգ հաստատությունների և գիտնականների կողմից հայագիտության նորությունների, նվաճումների ու ձեռքբերումների վերաբերյալ տեղեկությոն գիտական հանրությանը տրամադրելու հնարավորություն.
- հայագիտական ուղղվածության բաշխված հավաքածուների պարագայում ապահովել դրանց հնարավորինս ճշգրիտ փնտրելիությունը, տեսանելիությունը և արագ հասանելիությունը:

Համալրմանը զուգընթաց պետք է իրականացվի նաև հայագիտական նյութերի մատենագիտական նկարագրությունը, քանի որ շարունակական հրատարակությունների և

գիտական ժողովածուների պարագայում հարկավոր է վեր հանել և գրանցել դրանցում առկա հայագիտական ուղղվածության նյութերը:

II. Համալրում հայրենական հրատարակություններով

Որպես համալրման հիմնական աղբյուր պետք է հանդես գա անվճար պարտադիր օրինակի ստացումը Հայաստանի և ԼՂՀ հրատարակիչներից:

Ստացված գրականության մեկ օրինակը (գրքեր, պարբերականներ, քարտեզներ, նոտաներ, տեսալսողական նյութեր, էլեկտրոնային հրատարակություններ և այլն) մշտական պահպանության համար ուղարկվում է անձեռնմխելի հավաքածու: Հայրենական հրատարակություններով համալրումը իրականացվում է նաև գնման, բաժանորդագրության և նվիրատվության միջոցով: Անհրաժեշտության դեպքում ստացված հայագիտական նյութերը պետք է նաև արժևորվեն:

,

Համալրման ընթացքում պետք է տարանջատել համալրումը հայերեն և օտարալեզու հրատարակություններով: Այն օտարալեզու նյութերը, որոնք ունեն հայագիտական բնույթ, ենթակա են պարտադիր ձեռք բերման:

Մնացյալ օտարալեզու հրատարակությունների պարագայում ձեռք բերելուց առաջ հարկ է գնահատել դրանց գիտական, գեղարվեստական կամ պատմական արժեքը:

Հայերեն հրատարակված նյութերի պարագայում պարտադիր է ձեռք բերել առնվազն մեկ օրինակ այդ հրատարակությունից: Գրականության ձեռք բերման համար պետք է օգտագործել ուղղակի գնումը, Մփյուռքում գործող հայկական կենտրոնների աջակցությունը, գրքափոխանակությունը, էլեկտրոնային գնումների համակարգը /ասենք Ամագոն և նման հարթակներ/:

Արտերկրում հրատարակված հայագիտական փաստաթղթերի թղթային տարբերակների ձեռքբերման հնարավորության բացակայության դեպքում ուղիներ գտնել դրանց էլ. տարբերակի ձեռքբերման համար՝ պայմանավորվածությունների հասնելով հրատարակիչների կամ նրանց գործակալների հետ՝ հեղինակային իրավունքով սահմանված նորմերի շրջանակում: Դրանք այնուհետ կտեղադրվեն գրադարանի հայագիտական գրականության ռազմավարության մաս կազմող հայագիտական էլ. շտեմարաններում:

III. Հետահայաց համալրում:

Նկատի առնելով 1920-1990թթ. գրադարանային հավաքածուների քաղաքականացված համալրման փաստը, հարկավոր է մեծ ուշադրություն դարձնել այդ ժամանակահատվածում արտերկրում հրատարակված և Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուներում բացակա հայագիտական նյութերի (հիմնականում գրքեր, ամսագրեր, թերթեր, տեսալսողական նյութեր, միկրոժապավեն) ձեռք բերմանը: Հարկ է ուշադրություն դարձնել նաև մինչ 1920թ. ժամանակահատվածում լույս տեսած նյութերի ձեռք բերմանը, քանի որ ՀԱԳ-ի հավաքածուներում առկա շատ տպագիր նյութեր վնասված են և կարիք ունեն լրիվ կամ մասնակի վերականգնման: Համալրման ընթացքում պետք է հաշվի առնել ձեռք բերվող նյութի պատմական, գիտական, մշակութային արժեքը: Պետք է փորձել համալրումը իրականացնել բնօրինակներով, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա պատճենով (թղթային կամ թվային): Հետահայաց համալրման դեպքում հարկավոր է կատարել նաև գրականության համալրում փոխանակման հավաքածուի համար: Սփյուռքում հրատարակված և ներկայում ազգային-կրթական և հոգևոր կենտրոնների հավաքածուներում առկա, չուսումնասիրված, հայագիտական վավերական ահռելի գիտական տեղեկատվություն պարունակող տպագիր ու ձեռագիր հայերեն և այլալեզու պարբերականների, սկանավորված պարբերականների ձեռքբերում՝ այնուհետ հայագիտական կամ «Հայկական հարց. Հայոց ցեղասպանություն» շտեմարաններում տեղադրելու համար:

IV. Համալրում հայատառ գրականությամբ:

Հայատառ գրականությունը հայագիտական ուղղվածության առումով միատարր չէ, այնտեղ կան բազմաթիվ նյութեր ոչ հայագիտական ուղղվածությամբ, սակայն նկատի առնելով այն փաստը, որ Հայաստանի ազգային գրադարանը հանդիսանում է հայ գրքի խոշորագույն պահոցը աշխարհում, տպագրվել և ներկայումս էլ տպագրվում են բազմաթիվ հայատառ նյութեր (սրանց ավելանում են թվային տպագրությունները ևս), հարկ է հայագիտական ուղղվածությամբ համալրմանը զուգահեռ իրականացնել նաև

ա) «Հայ գիրք» հավաքածուի ձևավորումը՝ սկսած 1512թ. մինչ մեր օրերը:

Համալրվող հայատառ նյութերը պետք է բավարարեն հետևյալ պայմաններին.

- նյութը հայատառ է
- նյութը հայատառ է և զուգահեռ կա տեքստ այլ լեզուներով: Տիտղոսաթերթը միայն հայերեն է:
- նյութը հայատառ է և զուգահեռ կա տեքստ այլ լեզուներով: Տիտղոսաթերթը հայերեն է և այլ լեզուներով:

«Հայ գիրք» հավաքածուի բաղկացուցիչները կարող են կազմել հետևյալ ենթահավաքածուները.

- Հայ հնատիպ գիրք 1512-1800թթ.
- Հայ գիրք. Վաղ շրջան 1 1801-1850թթ.
- Հայ գիրք. Վաղ շրջան 2 1851-1900թթ.
- Հայ գիրք. Վաղ շրջան 3 1901-1920թթ.
- Մարքսիզմ լենինիզմի դասականների հրատարակություններ:
- Հայ մարքսիստների հրատարակություններ:
- Առաջին հանրապետության հրատարակություններ:
- Խորհրդային Հայաստան. 1820-1940թթ.
- Խորհրդային Հայաստան. 1941-1945թթ.
- Խորհրդային Հայաստան. 1946-1960թթ.
- Խորհրդային Հայաստան. 1961-1980թթ.
- Խորհրդային Հայաստան. 1981-1990թթ.
- Հայաստան 1991թ. – մեր օրեր
- Քարտեզներ
- Ուսումնական գրականություն
- Բառարաններ
- Տեղեկատու գրականություն
- Օրենսդրություն
- Ստանդարտներ և նորմատիվ ակտեր
- Հայ դասական գրողներ
- Հայ սփյուռք

բ) «Հայ պարբերական մամուլի» հավաքածուի ձևավորում

- կենտրոնական թերթեր և ամսագրեր
- քաղաքային թերթեր և ամսագրեր
- մարզային թերթեր և ամսագրեր
- գյուղական թերթեր և ամսագրեր
- գաղթօջախների թերթեր և ամսագրեր

գ) Շարունակական հրատարակություններ

դ) Հմայիլներ

ե) Պատկերագրեր

զ) քարտեզներ և ատլասներ

է) օրացույցներ

ը) էլ. կրիչներ

թ) ոչ գրքային հրատարակ